-ՌԱՄԱ մեթոդաբանություն-

Ռուսրսների արդյունավետ ու մաքուր արտադրությունը (ՌԱՄԱ) կանխարգելիչ բնապահպանական ռազմավարությունների ինտեգրված և շարունակական կիրառումն է գործընթացների, ապրանքների ու ծառայությունների արդյունավետությունը բարձրացնելու և մարդկանց ու շրջակա միջավայրի համար ռիսկերը նվազեցնելու նպատակով: ՌԱՄԱ-ի նպատակն է արտադրել ավելի քիչ ռեսուրսներով և միաժամանակ նվազագույնի հասցնել շրջակա միջավայրի վրա ազդեցությունները՝ բարձրացնելով ընդհանուր արտադրողականությունը: Փոքր ու միջին ձեռնարկությունների (ՓՄՁ-ներ) համար ՌԱՄԱ մեթոդաբանությունն արդյունավետ գործիք է ծախսերը նվազեցնելու, ինչպես նաև ՓՄՁ-ների մրցակցային առավելությունները բարելավելու ու էկոլոգիապես մաքուր գործելակերպ կիրառելու համար: Ինչպես նաև, ՌԱՄԱ-ն համարվում է ՓՄՁ-ներում շրջանաձև տնտեսության սկզբունքների ներդրման և խթանման արդյունավետ գործիք:

«Սամ-Հար» ՍՊԸ

-Սննդի և ըմպելիքի արտադրություն-

Կազմակերպության մասին

Հասցե՝ Աբովյան, Կոտայքի մարզ
Հիմնական ապրանքատեսակներ: գազավորված ըմպելիքներ, հյութեր, կոմպոտներ, դոնդող, ջեմ և մարինադներ
Աշխատակիցների քանակ՝ 15 (ևս 45 սեզոնային աշխատակից)
Հիմնական շուկա՝ Հայաստան, Բելառուս, Չիլի, Ֆրանսիա, Լիտվա, Նիդերլանդներ, Ռուսաստանի Դաշնություն, ԱՄՆ
Հիմնադրման տարեթիվ՝ 2003
Սերտիֆիկացում՝ ISO 22000:2018

«Սամ-Հար» ՍՊԸ-ն գտնվում է Կոտայքի մարզի Աբովյան քաղաքում: Այն գործում է 2003 թվականից և արտադրում է գազավորված ըմպելիքներ (լիմոնադ, հանքային ջուր) «Սիփան» ապրանքանիշով: Կոմպոտների արտադրությունը սկսել է 2009թ.-ից, որն էլ ընկերության ծաղկման սկիզբն էր: Պահածոների արտադրամասն առանձնացվել է 2013 թվականին և տեղափոխվել նոր մասնաշենք: 2010 թվականից արտադրվում է 15 տեսակի կոմպոտ և մուրաբա, 2 տեսակի դոնդող, 10 տեսակի բնական հյութ և 4 տեսակի մարինադ՝ «Սիփան», «Անուշ» և «Արևիկ» ապրանքանիշերով: Արտադրամասի աշխատանքը սեզոնային է (մայիս-հոկտեմբեր): Մակնշման և փաթեթավորման արտադրամասը գործում է տարվա մնացած օրերին՝ կախված պատվերներից: Ավելի էներգաարդյունավետ արտադրության հասնելու շարժառիթով ընկերությունը մասնակցել է ՌԱՄԱ ցուցադրական նախագծին «Կանաչ տնտեսություն Արևելյան գործընկերության տարածաշրջանում» (EAP Green)-ի շրջանակներում (2013-2017): Այս հրապարակումը ցույց է տալիս ընկերության փորձը, որը զեկուցվել է 2021 թվականին իրականացված մոնիթորինգից հետո՝ ծրագրի ավարտից չորս տարի անց:

Առավելություններ

- **16 (2 մասնակի) միջոցառումների իրականացում 4 ՌԱՄԱ տարբերակների շրջանակում**
- **Էլեկտրաէներգիայի սպառման կրճատում 50,720 կՎտժ/տարի (3.2%)**
- **Ջրի սպառման կրճատում 5,830 խորանարդ մետր/ տարի (2.2%)**
- **Բնական գազի սպառման կրճատում 0.3%-ով.**
- **Նյութերի սպառման կրճատում տարեկան 110 տոննայով**
- **Տարեկան 12 տոննա CO2 արտանետումների կրճատում**

Նախագծի մոտեցումները

ՌԱՄԱ գնահատումն ուսումնասիրել է արտադրական տարածքը և հայտնաբերել 16 միջոցառում 4 ՌԱՄԱ տարբերակների շրջանակներում: Առաջարկված բոլոր 16 միջոցառումները իրականացվել են (2 մասամբ):

ՌԱՄԱ տարբերակ 1: Թափոնների կրճատում և վերամշակում: Թափոններ՝ սերկևիլի չոր միջուկ, նռան կեղև, ծիրանի և դեղձի կորիզներ, վաճառվել են համապատասխան կազմակերպություններին, որոնք են թեյի, սննդի, օծանելիքի, քսուքների արտադրողները: Դեղձի սերմերը օգտագործվել են ոգելից խմիչքները մաքրելու համար, իսկ օրգանական թափոնները (բացառությամբ ծիրանի և դեղձի կորիզների) վերածվել են կենսահումուսի՝ ձեռնարկությունում որպես օրգանական պարարտանյութ հետագա օգտագործման համար կամ վաճառքի նպատակով:
ՌԱՄԱ տարբերակ 2: Ջրի խնայողություն և վերաօգտագործում: Հումքի լվացման համար օգտագործվող ջուրը (բացառությամբ վերջնական լվացումից հետո ջրի) օգտագործվել է ոռոգման նպատակով, քանի որ այն չի պարունակում կողմնակի քիմիական նյութեր: Կառուցվել է նաև ջրամբար՝ գործարանի տարածքում լվացվելու և այգիների ոռոգման համար:
ՌԱՄԱ տարբերակ 3: Նյութերի խնայողություն և օգտագործման կրճատում: Ամեն տարի անձնակազմը սեզոնի սկզբին վերապատրաստման դասընթացներ է անցկացրել՝ հումքի վերամշակման փուլում նյութերի և պատրաստի արտադրանքի կորուստներից խուսափելու համար: Պատրաստի արտադրանքի մնացորդները նվազեցնելու համար հումքը ստացվել է միայն մատակարարների հետ կնքված պայմանագրերով, հերմետիկ բաժակները/կափարիչները ստուգվել են, նաև վերահսկվել է որակի վերահսկման սարքի հետ աշխատանքը:
ՌԱՄԱ տարբերակ 4: Էներգիայի արդյունավետ օգտագործում/ընտրություն և էներգիայի արդյունավետ օգտագործում: Չօգտագործվող սարքավորումներն անջատված պահելը, սարքավորումները վերանորոգելն ու կարգավորելը, նոր EE/LED շրջանակների տեղադրումը, ընդհանուր արտադրական տարածքից պատրաստի արտադրանքի պահեստավորման տարածքի առանձնացումը և ձմռանը միայն պահեստի ջեռուցումը՝ օգնեցին հասնել էներգաարդյունավետության:
Մասնակի իրականացված միջոցառումներ (իրականացումն ընթացքի մեջ է):

- ·Ջրի սպառման կրճատում և վերաօգտագործում: Հումքի վերջնական լվացման ջուրն օգտագործվում է նաև հումքի առաջնային լվացման համար:
- ·Էներգիայի արդյունավետ օգտագործում/ընտրություն և էլեկտրաէներգիայի արդյունավետ օգտագործում: Իրականացվում է ջերմային ցանցերի (արտաքին խողովակաշար) կանոնավոր ստուգում, և անհրաժեշտության դեպքում ջերմամեկուսացում է իրականացվում (ընթացիկ ծախսեր):

Պահպանելով ձեռքբերումները

Իրականացված հիմնական տարբերակները

Մոնիթորինգի հաշվետվության վերջում ընկերության աշխատակազմի կողմից իրականացվել են 16 ՌԱՄԱ միջոցառումներ (2 մասնակի):

Հիմնական տնտեսական ցուցանիշներ

	Ներդրում (եվրո)	Խնայողություն (եվրո/տարի)	Ետգնման ժամկետ (տարի)
4 ՌԱՄԱ տարբերակ:	7,800	7,580	1

Ռեսուրսների խնայողություն

	Էներգիա (կՎտժ/տարի)	Նյութեր (տ/տարի)	CO_2 (տ/տարի)
4 ՌԱՄԱ տարբերակ:	50,720	110	12

Այլ հնարավորություններ

ՌԱՄԱ-ի շարունակական ծրագրի շնորհիվ «Սամ Հար» ՍՊԸ-ն մեծ արդյունքների է հասել արտադրանքի որակի, աշխատանքային առողջության և անվտանգության և ընդհանուր բնապահպանական ցուցանիշների ոլորտում: Կոմպոտի, ջեմի, դոնդողի, բնական հյութի և մարինադի արտադրության ընթացքում գործընթացների շղթայի համակարգված օպտիմալացումը և վերակառուցումը օգնում են ապահովել արտադրության շարունակականությունը, նվազագույնի հասցնելով արտադրության ընդհատումները: Ներքին մթնոլորտի պահպանման, էներգիայի սպառման համակարգերի արդիականացման և կանխատեսվող միջոցառումների իրականացման շնորհիվ «Սամ Հար» ՍՊԸ-ն կզբաղեցնի ավելի մեծ շուկա, օգուտներ կբերի բիզնեսի, սոցիալական և բնապահպանական բնագավառներում: Ընկերությունը սկսել է ՌԱՄԱ-ի իրականացումը 2016թ.-ին, երբ առաջին իսկ հանդիպման ընթացքում առաջարկված բոլոր 16 միջոցառումները իրականացվեցին (2 մասամբ) և ոչ մի միջոցառում չհետաձգվեց և չմերժվեց: Սա հանգեցրեց ավելի լավ տնտեսվարման, գործընթացների ավելի լավ վերահսկման, սարքավորումների ու արտադրանքի փոփոխության և այլն: «Սամ Հար» ՍՊԸ-ն շահագրգռված է շարունակել ՌԱՄԱ միջոցառումների իրականացումը իրենց ընկերությունում, քանի որ դրանք ընկերությանը բերել են բնապահպանական, ֆինանսական և սոցիալական օգուտներ

ՌԱՄԱ-ի ներդրումը եղել է ԵՄ կողմից ֆինանսավորվող ծրագրերի մաս՝ **«Կանաչ տնտեսություն Արևելյան գործընկերության տարածաշրջանում»** (2013-2017) և **«ԵՄ-ն շրջակա միջավայրի համար»** (2019-2022), որոնք իրականացվել են ՄԱԿԱԶԿ կողմից: Այս համատեքստում **«Սամ-Հար» ՍՊԸ-ն** միացել է ՌԱՄԱ ուսուցման ու աջակցության ծրագրին «Կանաչ տնտեսություն Արևելյան գործընկերության տարածաշրջանում»-ի և մշտադիտարկվել է «ԵՄ-ն շրջակա միջավայրի համար» ծրագրի շրջանակներում: Հետագա այցելություններ են իրականացվել նաև «ԵՄ-ն շրջակա միջավայրի համար» ծրագրի շրջանակներում՝ ստուգելու իրականացված ՌԱՄԱ տարբերակները «Կանաչ տնտեսություն Արևելյան գործընկերության տարածաշրջանում» ծրագրի ավարտից հետո: «ԵՄ-ն շրջակա միջավայրի համար» ծրագիրն օգնում է Արևելյան գործընկերության գործընկեր վեց երկրներին պահպանել իրենց բնական կապիտալն ու բարձրացնել մարդկանց բնապահպանական բարեկեցությունը՝ աջակցելով շրջակա միջավայրին առնչվող գործողություններին, ցուցադրելով և բացելով ավելի կանաչ աճի հնարավորությունները և ստեղծելով շրջակա միջավայրի ռիսկերն ու ազդեցությունները ավելի լավ կառավարելու մեխանիզմներ: Ավելին իմանալու համար այցելե՛ք **www.eu4environment.org:**

Այս հրատարակությունը պատրաստվել է Եվրոպական միության աջակցությամբ: Հրապարակման բովանդակությունը բացառապես ՄԱԿԱԶԿ-ի պատասխանատվությունն է և պարտադիր չէ, որ արտահայտի Եվրոպական միության տեսակետները:

© – 2023 – ՄԱԿԱԶԿ. Բոլոր իրավունքները պաշտպանված են. Լիցենզավորված է Եվրամիությանը՝ համաձայն պայմանների:

Միավորված ազգերի կազմակերպության արդյունաբերական զարգացման կազմակերպություն
Տիկին Տատյանա Չեռնյավսկայա
ԵՄ-ն շրջակա միջավայրի համար Ծրագրի ղեկավար
Հեռ: +43 1 26 0 26 5520 E-mail: t.chernyavskaya@unido.org

Կոնտակտներ: Կովկասի ՏԲԿ.
Հայաստանի ազգային գրասենյակ
Այգեստան փ.7, շենք N 2, 0010, Երևան
Կայք: www.recp.am Հեռ: +374-115-75-148